# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Ա/Ձ Տիգրան Նալբանդյան-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/52 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 5 | - | - | Սարքը նախատեսված պետք է լինի լաբորատոր պայմաններում բույսերի տերևների մակերեսի և մորֆոլոգիական պարամետրերի ճշգրիտ չափման և վերլուծության համար : Օգտագործվում է բույսերի ֆիզիոլոգիայի, պաթոլոգիայի, ագրոնոմիայի և անտառագիտության հետազոտություններում, ինչպես նաև մորֆոլոգիական և ֆենոտիպային ուսումնասիրությունների ընթացքում: Սարքը հիմնված պետք է լինի պատկերների ստացման վրա՝ բարձր լուծաչափով սկանավորման միջոցով: Ստացված տերևների պատկերները մշակվում են մասնագիտացված ծրագրային ապահովմամբ, որը ավտոմատ կերպով հաշվարկում է տերևների մակերեսը և շրջագծային ու ձևաբանական ցուցանիշները: Սկանավորման և պատկերների ստացման համակարգ Սկանավորման տարածք՝ 220±20 × 300±30 մմ Օպտիկական լուծաչափ՝ 4800±500 dpi Չափման առավելագույն միջակայք՝ տերևներ, որոնց չափերը չեն գերազանցում 220±20 × 300±30 մմ Պատկերների ստացման սարք՝ կալիբրացված պատկերային համակարգ (շարժական պլանշետային |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | սկաներ) Չափման ճշգրտություն. մակերեսի չափման լուծաչափ՝ 0.001±10% սմ$^2$ Երկարության և լայնության չափման լուծաչափ՝ 0.01±10% սմ: Չափվող և հաշվարկվող պարամետրեր՝ տերևի մակերես (մեկական տերևների մակերես, բազմակի տերևների մակերես, տերևների ընդհանուր մակերես), տերևի երկարություն, տերևի շրջագիծ, տերևի առավելագույն լայնություն, տերևի միջին լայնություն, երկարություն/լայնություն հարաբերակցություն (aspect ratio), տերևաթերթի և տերևակոթունի երկարություն, ձևի գործակից (shape factor), օգտագործողի կողմից սահմանվող տերևի լայնություն, օգտագործողի կողմից սահմանվող երկարություն, վերլուծվող մակերես (analysis area): Ծրագրային ապահովում և տվյալների կառավարում. տվյալների ավտոմատ հաշվարկ և պահպանում, չափման արդյունքների արտահանում Excel ձևաչափով, տվյալների առցանց դիտում և տպագրություն, արխիվային տվյալների որոնում ըստ ժամանակահատվածի և տերևների խմբերի, տվյալների պահպանում և հեռահար հասանելիություն ցանկացած ժամանակ: Համալրում. պատկերների ստացման համակարգ, տերևների պատկերային վերլուծության ծրագրային ապահովում, տվյալների մշակման և արտահանման մոդուլներ: Առնվազն 1 տարվա երաշխիք: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, փաթեթը չվնասված և ապահովված համապատասխան պահպանման պայմաններով մատակարարման ամբողջ ընթացքում: Մատակարարումը՝ մասնակցի կողմից: Մատակարարումից առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Ա/Ձ Տիգրան Նալբանդյան в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/52 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | марка | наименование производителя | технические характеристики |
| 5 | - | - | Սարքը նախատեսված պետք է լինի լաբորատոր պայմաններում բույսերի տերևների մակերեսի և մորֆոլոգիական պարամետրերի ճշգրիտ չափման և վերլուծության համար : Օգտագործվում է բույսերի ֆիզիոլոգիայի, պաթոլոգիայի, ագրոնոմիայի և անտառագիտության հետազոտություններում, ինչպես նաև մորֆոլոգիական և ֆենոտիպային ուսումնասիրությունների ընթացքում: Սարքը հիմնված պետք է լինի պատկերների ստացման վրա՝ բարձր լուծաչափով սկանավորման միջոցով: Ստացված տերևների պատկերները մշակվում են մասնագիտացված ծրագրային ապահովմամբ, որը ավտոմատ կերպով հաշվարկում է տերևների մակերեսը և շրջագծային ու ձևաբանական ցուցանիշները: Սկանավորման և պատկերների ստացման համակարգ Սկանավորման տարածք՝ 220±20 × 300±30 մմ Օպտիկական լուծաչափ՝ 4800±500 dpi Չափման առավելագույն միջակայք՝ տերևներ, որոնց չափերը չեն գերազանցում 220±20 × 300±30 մմ Պատկերների ստացման սարք՝ կալիբրացված պատկերային համակարգ (շարժական պլանշետային |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | սկաներ) Չափման ճշգրտություն. մակերեսի չափման լուծաչափ՝ 0.001±10% սմ$^2$ Երկարության և լայնության չափման լուծաչափ՝ 0.01±10% սմ: Չափվող և հաշվարկվող պարամետրեր՝ տերևի մակերես (մեկական տերևների մակերես, բազմակի տերևների մակերես, տերևների ընդհանուր մակերես), տերևի երկարություն, տերևի շրջագիծ, տերևի առավելագույն լայնություն, տերևի միջին լայնություն, երկարություն/լայնություն հարաբերակցություն (aspect ratio), տերևաթերթի և տերևակոթունի երկարություն, ձևի գործակից (shape factor), օգտագործողի կողմից սահմանվող տերևի լայնություն, օգտագործողի կողմից սահմանվող երկարություն, վերլուծվող մակերես (analysis area): Ծրագրային ապահովում և տվյալների կառավարում. տվյալների ավտոմատ հաշվարկ և պահպանում, չափման արդյունքների արտահանում Excel ձևաչափով, տվյալների առցանց դիտում և տպագրություն, արխիվային տվյալների որոնում ըստ ժամանակահատվածի և տերևների խմբերի, տվյալների պահպանում և հեռահար հասանելիություն ցանկացած ժամանակ: Համալրում. պատկերների ստացման համակարգ, տերևների պատկերային վերլուծության ծրագրային ապահովում, տվյալների մշակման և արտահանման մոդուլներ: Առնվազն 1 տարվա երաշխիք: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, փաթեթը չվնասված և ապահոված համապատասխան պահպանման պայմաններով մատակարարման ամբողջ ընթացքում: Մատակարարումը՝ մասնակցի կողմից: Մատակարարումից առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ: |